ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄ

ԱՍՏՍՏՎԱԾ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՂՈՒԿԱՅԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵՅԻ 1938 Թ. ՄԱՐՏԻ 29-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ № 12 ԿԵՏԻ

38.1
Ն-91

ԵՆԻՆԱԿԱՆ 1938 ՏԵՂԱՐԴԻ ՏՊԱՐԱՆ

29954
19 JUN 2013

Գլավլիտի լիազոր—№ 517
Պատվեր № 1055
Տիրաժ 180 որինակ

2745
38 մ

17 FEB 2010

6. Թոբոսպ . . . . . 498 »
7. Իլլի . . . . . 512 »
8. Փալուալի . . . . . 514 »
9. Բաշ-գյուղ . . . . . 244 »
10. Սարյար . . . . . 410 »
11. Գեաիկ . . . . . 275 »
12. Սամուռլի . . . . . 294 »
13. Զորաշեն . . . . . 575 »
14. Զոուլի . . . . . 546 »

2-րդ զոնա

Վարելահողերի տարածությունը հեկտարներով

1. Վարդաղբյուր . . . 209 հեկ.
2. Բոզյոխուշ . . . . . 371 »
3. Զիֆտալի . . . . . 464 »
4. Կարմրավան . . . . 514 »
5. Դուզխարաբա . . . . 384 »
6. Ղուրդբուլաղ . . . . 383 »
7. Աբվա . . . . . 220 »
8. Սալուդ . . . . . 208 »
9. Ղուկասյան . . . . . 824 »
10. Քեֆլի . . . . . 390 »

11· 1-ին Շիշթափա . . .	504	»
12· 2-րդ » . . .	313	»
13· Ղազանչի	970	»
14· Քոռաղբյուր	720	»
15· Դարաքո	419	»
16· Բավրա	678	»
17· Թազաքյանդ	295	»

Հացահատիկային կուլտուրաների բարձր բերքատվությունն ապահովելու, ժողովուրդների սիրելի առաջնորդ մեծ և իմաստուն ղեկավար, հայր ՍՏԱԼԻՆԻ ցուցմունքը՝ մոտակա 3—4 տարում հացահատիկի արտադրանքը ԽՍՀՄ-ում տարեկան 7—8 միլիարդ փթի հասցնելու լոզունգը կենսագործելու նպատակով, իբրև մինիմալ կանոններ, անհրաժեշտ համարել Ղուկասյանի շրջանում կիրառելու հետևյալ ագրոմիջոցառումները՝

1· ՍԵՐՄԱՑՈՒՑԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄԸ ՑԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

1· *Գարնանացանի, ինչպես և աշնանացանի ամբողջ սերմացուն առանձնացնել, համաձայն ապպրոբացիոն արձանագրությունների, ըստ նշված տեսակների և կատեգորիաների, միանգամայն առանձին հընձել, դիզել ու կալսել սերմադաշտերի, սերմացուի համար պիտանի ճանաչված և առանձնացված հողամասերի բերքը:*

2· *Սերմացուի համար առանձին կալսված հացահատիկները, առնվազն ընթացիկ տարվա պլանի չափով, թե աշնանացանի և թե գարնանացանի սերմացուն, քամհար սերմազտիչից և տրիերից բաղկացած ագրեգատով զտել, լրիվ չափով առանձնացնել հատուկ պահեստներում, կամ չտեմարաններում: Այդ ժամանակամիջոցում լաբորատորիայի միջոցով ստուգել սերմացուին հատկացված հացահատիկի ծլունակությունը:*

3· *1939 թ. աշնանացանը լավորակ սերմերով ապահովելու նպատակով 1938 թ. աշնանացանի բերքից առանձնացնել)«) թ. ցանվելիք աշնանացանի համար անհրաժեշտ քանակությամբ սերմացուի ½—⅓-ի չափով:*

4· *Հացահատիկի բոլոր տեսակի պահեստները և հատկապես սերմացուների պահեստներն ախտահանել մանրակրկիտ կերպով, համաձայն Հողբաժնի հրահանգի:*

5· *Սերմացուների համար պետք է ունենալ հատուկ պահեստներ, վորոնց մեջ սերմացու լցնելը թույլատրվում է միայն պայքարող մասնագետների, կոլտնտեսության նախագահի, վորակի տեսչի մասնակցությամբ և կազմված հատուկ արձանագրությամբ, վորը հաստատում է պահեստը վնասատուներից զերծ լինելը և նրա պիտանիությունը՝ սերմացու պահելու համար:*

6· *Բերքահավաքից մեկ ամիս առաջ ավարտել բոլոր պահեստների ու տարաների պասպորտիզացիան, ինչպես նաև անհրաժեշտ բոլոր վերանորոգումները, մաքրել և ախտահանել այդպիսիք, ղեկավարվելով Հող*

բաժնի հրահանգով։ Ցուրաքանչյուր տեսակ սերմացուին, ըստ յուր սորտերի և կատեգորիաների, հատկացնել պահեստ կամ առանձին չտեմարան։ Իրարից դժվար անջատվող կուլտուրաների չտեմարաններն իրար կից դասավորելը խստիվ արգելել։

7. Սերմացուն, չտեմարան, կամ պահեստ լցնել վոչ ավելի քան 1,5 մետր բարձրությամբ, այն հաշվով, վոր պահպանման ընթացքում ամեն ժամ հնարավոր լինի սերմացուի դրությունն ստուգել։

8. Բերքահավաքից մինչև ցանքը սերմացուի պահպանման ու կանոնավոր խնամքի ամբողջ պատասխանատվությունը դնել անձնապես կոլտնտեսության նախագահի վրա, պարտավորեցնելով նրան պարբերաբար, առնվազը 15 որը մեկ անգամ, կցված մասնագետի մասնակցությամբ ստուգել սերմացուների առկա դրությունը և վնասատուների հայտնաբերման դեպքում միջոցներ ձեռք առնել այդպիսիք խսպառ վոչնչացնելու համար։ (Ցուրաքանչյուր ստուգման առթիվ հատուկ արձանագրություն կազմելը պարտադիր է)։

2. ՍԵՐՄԱՑՈՒՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ։

«Ցանքի համար ընտրել լավագույն սերմեր, մաքրել դրանք ամեն տեսակի աղբից, պահպանել հափշտակումից ու փչացումից, պահել դրանք մաքուր ոդափոխվող շենքում», ընդարձակել տեսակավոր սերմերի ցանքը»։

9. Խստիվ արգելել ցանելու այն սերմացուները, վորոնք սերմ ստուգող լաբորատորիայի կողմից տվյալ սերմացուի լավորակությունը հաստատող համապատասխան փաստաթուղթ չունեն։

10. Կոլտնտեսությունների ամբողջ ցանքի սերմացուն պարտադիր կարգով յենթարկել լաբորատոր ստուգման, առնվազն յերկու անգամ, ըստ վորում 1-ին ստուգումն ավարտել վոչ ուշ քան հոկտեմբերի 15-ին, իսկ 2-րդը՝ գարնանացանքից 20 որ առաջ։

11. Լաբորատոր ստուգման համար սերմացուի նմուշներ վերցնել համաձայն գոյություն ունեցող հրահանգի, շրջանային ագրոսերսոնալի և կամ սերմ ստուգող լաբորատորիայի մասնագետների միջոցով

Ծանոթություն.— Առաջին և վերջին լաբորատոր ստուգման միջանկյալ ժամանակաշրջանում կատարել սերմացուի զտում այնքան անգամ, մինչև վոր տվյալ սերմացուի պարտյան լրիվ չափով համապատասխանի ոհմանված կոնդիցիային։

Աշնանացանք վերջին լաբորատոր ստուգումն ավարտել վոչ ուշ քան ցանքից 5 որ առաջ։

12. Նշանաբան ունենալով սերմացուի մաքրությունը հասցնելու 100 տոկոսի, սերմաբուծական կոլտընտեսություններում և սերմադաշտերում թույլատրվում է ցանել միմիայն 1-ին կարգին պատկանող սերմեր 100 տոկոս մաքրությամբ։

Վոչ սերմնաբուծական կոլտնտեսություններում և վոչ սերմացուի ցանքսերը թույլատրվում է ցանել նաև 2-րդ կարգին պատկանող սերմեր, վոչ պակաս 97 տոկոսի մաքրությամբ։

13. Ա. Ամբողջ հացահատիկի սերմացուն յենթարկել 100 տոկոսով սրբահանման, սերմադաշտերինը կա

կատարել բացառապես թաց, կամ կիսաչոր մեթոդով (նայած հացահատիկի տեսակին և վարակվածության աստիճանին)։ Իսկ մնացած ցանքսերի սերմացուն հընարավորին չափ նույնպես առաջին հերթին կատարել թաց, կամ կիսաչոր յեղանակով։

Բ. Տեխնիկական միջոցների բացակայության դեպքում, կամ կլիմայական աննպաստ պայմանների դեպքում Հողբաժնի թույլտվությամբ ախտահանումը կատարել չոր յեղանակով։

Գ. Թաց և կիսաչոր ախտահանումը կատարել ցանքսի հետ զուգընթաց, վոչ շուտ ցանքսից 1—2 որ առաջ։

14. ԹՈՐՈՍ գյուղի կոլտնտեսության սերմաբուծական ամրողջ սերմացուն ախտահանել բացառապես թաց և կիսաչոր մեթոդով, տեխնիկական հարմարություն ունենալու դեպքում նաև տերմիկ մեթոդով փոշեմբրիկից խուսափելու նպատակով։

3. ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՈՒ ԿԻՐԱՌՄԱՆ ԽՆԴՐՈՒՄ

15. Ցանքաշրջանառությունը կիրառված կոլտնտեսություններում ցանքսը կատարել բացառապես ցանքաշրջանառության փոխանցման տախտակում նախատեսված կարգով և քանակով։

16. Ցանքաշրջանառությունը չկիրառված կոլտնտեսություններում միջոցներ ձեռք առնել կատարվող ցանքսը մասիվացնելու համար։

4. ԴԱՇՏԵՐԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

17. Պարարտացման նպատակով առանձնացվող գոմաղբը պահել հատուկ կառուցված աղբամբարներում, իսկ մեզը՝ մեզամբարներում։ Մոխիրը, թռչնաղբը և տեղական խառնաղբը պահպանել հատուկ աղբանոցներում, ծածկի տակ, իսկ գարնանը գոմերում յեղած անասունների աղբը լեցնել փոսերի մեջ, վրան ավելացնել խառնաղբ, ծածկել հողի չերտով, և հասունացումից հետո միայն նոր դաշտ տեղափոխել։

18. Ուշ աշնան և ձմռան ընթացքում դաշտ փոխադրված պարարտանյութերը դիզել կույտերով, 1 հեկտարի վրա 3—4 կույտ, այդ կույտերը պնդացնել և ծածկել հողաչերտով տանիքաձև։

19. Ուշ աշնան և ձմռան ընթացքում դաշտում կիտված և գարնանը փոխադրված պարարտանյութերը, դաշտ դուրս գալիս, վարից առաջ, չաղ տալ հողի յերեսին և անմիջապես խորը վարել։

20. Պարարտանյութերի նորման 1 հեկտարին ընդունել գոմաղբ 30—40 տոնն կամ 50—60 սայլ, տեղական խառնաղբը, (մոխիրը և տնային կեղտը) 15—20 տոնն կամ 30—40 սայլ։

5. ՑԱՆՔԻՍ ՀԱՄԱՐ ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

21. Վաղ գարնանը, դաշտերը բացվելուց անմիջապես հետո, ձեռնարկել պայքարի գործը դաշտային մկների և մկանման կրծողների դեմ։

$$. Գարնան վարից առաջ դաշտերից դուրս հանել կուտակված քարե կույտերը (չագիլները) և վերացնել միջնակները։

23. Կրծողների դեմ թունավորման աշխատանքները ավարտել 1-ին զոնայում ապրիլի 10—15-ը, իսկ 2-րդ զոնայում՝ ապրիլի 20—մայիսի 1-ը:

24. Գարհավաքի աշխատանքները կազմակերպել գարնան վարի հետ զուգընթաց և ավարտել գարնացանի հետ միաժամանակ:

25. Վարը կատարել բացառապես գութաններով առնվազն 20 ս. մ. խորությամբ:

26. Վարը կատարել հողի քեշի (հասունացման) ժամանակ: Խստիվ արգելել ցեխ վար անելը, հողի ցեխ ժամանակ վար կատարողներին կանչել պատասխանատվության:

27. Վարը կատարել մաքուր, առանց խամի և խառակի ու առաջին իսկ հնարավոր դեպքում նախորդ վարին ուղղահայաց ուղղությամբ: Գործը դնելիս անպայման յելնել տվյալ դաշտի նախորդ վարի ուղղությունից՝ առը ներսի դեպքում անպայմանորեն գործը դնել առը՝ դուրս և ընհդակառակը:

Բազմախոփան ելի վարը կատարել բոլոր խոփերով հավասար խորհությամբ միայն: Անխտիր, բոլոր վարերի նկատմամբ տալ մաքուր գլխավար առանց խամերի դաշտերի լրիվ ոգտագործման:

28. Վարի վորակի ամբողջ պատասխանատվությունը դնել անձնապես բրիգադի և կոլտնտեսության նախագահի վրա:

6. ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՀԱՄԱՐ:

29. Գարնանացանն իբրև կանոն կատարել՝

Ա.) Ցրտահերկի վրա, բ) շարքահերկ՝ բույսերից հետո, գ) աշնանը վարած խոփան հողերում, դ) համապատասխան ..... ապահովված համատարած ցանքերից հետո:

30. Հիշված դեպքում հողի նախապատրաստումը կատարել հետեվյալ ձեվով՝

ա. Համատարած ցանքսերով զբաղված լինելու դեպքում —ամռանը նախորդող բույսի բերքահավաքին զուգահեռ բազմախոփերով կատարել խոզանավար 6—8 ս. մ. խ., իսկ աշնանը նույն այդ խոզանավարը 20 ս. մ. խորությամբ ցրտահերկել:

բ. Շարքահերկ բույսերից հետո, դաշտն ազատվելուն պես կատարել ցրտահերկ առնվազն 20—22 ս. մ. խորությամբ:

գ. Խոփան հողերի առաջին ցրտահերկը կատարելուց հետո, մեծ կոշտեր ստանալու դեպքում, մշակել մի քանի անգամ, մինչև կոշտերի ջարդելը:

31. Բոլոր դեպքերում ել ցրտահերկն առանց փոց խելու թողնել մինչև գարուն: Շրջանում ցրտահերկն ավարտել վոչ ուշ քան մինչ նոյեմբերի 10-ը:

32. Գարնանը, հողի քեշին անմիջապես ցրտահերկը և ամռան ցելերը կրկնավարել, ըստ վորում թեթև փուխր մնացած և մոլախոտերով չվարակված հողամասերում գարնան մշակումը կատարել նաև կուլտիվատորներով: Մոլախոտերով չվարակված հողամասերում գարնանը մշակումը կատարել նաև կուլտիվատորներով: Մոլախոտերով վարակված հողերում կատարել ցրտահերկի և ցելերի կրկնավար առնվազն 15 սմ. խորությամբ:

33. Գարնանը հիմնական վարից, կամ կրկնավարից անմիջապես հետո, փոցխել այնքան անգամ մինչև հողամասը կոշտերից, սեզերից ազատվի, ապա նոր ցանել։

34. Մոլախոտերով վարակված հողամասերի ցանքի կատարումը հետաձգել ցանքսի վերջում։

7. ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ԱՇՆԱՆԱՑԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

35. Գարնանացանն իբրև կանոն կատարել ցելերի վրա, ըստ վորում՝

ա. 1938 թ. աշնանացանի համար նախատեսված մանքուր ցելային հողամասերը վաղ ցել անել գարնանացանի կամպանիային զուգահեռ այն հաշվով, վոր ազատեցնող, բոլոր հողամասերը վարվեն վոչ ուշ քան տրվյալ սառնային հասկավոր հացահատիկների ցանքի ավարտման ժամկետում։

36. Սև ցելի հիմնական վարը կատարել աշնանից 20—22 սմ. խ., վաղ գարնան դաշտ դուրս գալուն պես առաջին իսկ հնարավոր մոմենտին կատարել փոցխում։

37. Վաղ ցել կատարել առնվազն 20—22 սմ. խորությամբ և փոցխել վարին զուգընթաց։

38. Լանջերի, ավազոտ հողերի, կամ մեծ վարելաշերտեր չունեցող հողամասերի վարի խորությունը հարմարեցնել նրա կուլտուրական շերտին, այդ խնդիրը յուրաքանչյուր անգամ համաձայնեցնելով տեղական ագրոպերսոնալի հետ։

39. Հարոսը, կամ զբաղված ցելը վարել խոտհունձին, կամ զբաղեցնող կուլտուրայի բերքահավաքին զուգահեռ, միաժամանակ կատարելով նաև նրա փոցխումը (վարի խորությունը սահմանել առնվազն 20-22 սմ. խ.)։

40. Սև և վաղ ցելերը, գարնան և աշնան ընթացքում մշակել առնվազն 3 անգամ, այն հաշվով, վոր մինչև ցանքսի սկիզբը ցելադաշտերը միշտ սև՝ մոլախոտերից զերծ և միանգամայն փուխր վիճակում լինեն։

41. Սև և վաղ ցելերը կրկնավարել լուշչինիկներով, բազմախոփանիներով 10—12 սմ. խ., մոլախոտերով վարակված խոնավ հողերում կրկնավարել առնվազն 15 սմ. խորությամբ։

8. ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԽՆԴՐՈՒՄ

42. Բոլոր կալանտեսություններում լավորակ հողամասերից սերմարուծության նպատակով առանձնացնել հատուկ սերմադաշտերի այնքան տարածություն, վորից ստացված բերքը ապահովի զալիք տարվա սերմացուի պահանջը։

43. Սերմադաշտերից ստացված բերքը մյանդամայն առանձնացնել և ծառայեցնել առաջին հերթին տրվ

յալ կոլտնտեսության միմիայն սերմացուի կարիքնե-
րի համար։

44. Սերմադաշտերին անհրաժեշտ սերմացուն ա-
ռանձնացնել կամ սելեկցիոն սորտերից կամ տեղական
այլատեսակների մասսայական հասկային ընտրություն
ներից ստացված հատիկներից։

ա. Զոնայի 14 գյուղերում կալում առանձնացնել
գարնանացան ցորեն քոիկ 40 ցենտ., կարմրահատ՝ 100
ցենտ։

բ. Զոնայի 17 գյուղերում կալում առանձնացնել
գարնանացան ցորեն երինսոյերում (կարմրահատ) այլա
տեսակ 180 ցենտներ։

45. Սերմադաշտի հունձը, փոխադրումը, կալսու-
մը ու ստացված բերքի պահպանումը, կատարել համա
ձայն ապպրոբացիոն ակտերի, միանգամայն առանձին
առանձին։

46. Սերմադաշտերի ցանքսը կատարել ամբողջա-
պես շարքացանով։

47. Սերմադաշտերի պարարտացումը կատարել
միմիայն լավ մշակված, փթած, համապատասխան խնամ
քով պահված գոմաղբով, կամ մոլախոտերի սերմեր
չպարունակող խառնաղբով։ Սերմադաշտերը թարմ գո-
մաղբով պարարտացնելը արգելել։

48. Սերմադաշտերի անկյուններում տնկել ցու-
ցանակներ, նշելով հացահատիկի սորտը և տարածու-

թյունը, իսկ Հողբաժնում սահմանված հատուկ ձևով
կազմել մատյան և շրջանի ամբողջ սերմադաշտերն
ըստ կուլտուրաների ու սորտերի ցուցակագրման յենթարկել։

49. Սերմադաշտերի սորդային քաղհանը համա-
րել պարտադիր։

2745
38

9. ՅԱՐՈՎԻԶԱՑԻԱՅԻ ԽՆԴՐՈՒՄ

50. Գարնանացան ցորենի և գարու յարովիզացիա
յի յենթարկված սերմացուն ցանել 1-ին հերթին այն
հողամասերի վրա, որոնք յենթակա յին չոր քամինե-
րին։

51. Ցանքսից առնվազն 20 որ առաջ յուրաքան-
չյուր կոլտնտեսություններում առանձնացնել համա-
պատասխան պահեստ և ձեռք բերել անհրաժեշտ հար-
մարություն և ինվենտար։

52. Յուրաքանչյուր կոլտնտեսությունում յարո-
վիզացիայի աշխատանքները կենտրոնացնել հատկա-
պես նախապատրաստված, կամ անցյալում փորձ ունե
ցող վստահելի կոլտնտեսականների ձեռքում, որոնց
վրա և դնել վերմացուի ճիշտ յարովիզացման պա-
տասխանատվությունը համաձայն գոյություն ունե-
ցող հրահանգի։

10. ՑԱՆՔ

53. Մեքենահարմար բոլոր հողամասերը ցանել բացառապես շարքացանով։

54. Խոզանի յերեսին ցանքս կատարելը և ապա գութանով կամ արորով վարելը խստիվ արգելվում է։

55. Շաղացան կատարել միմիայն մեքենայացման անհարմար հողակույտերում, շաղացան կատարելիս սերմը ցանել նախորոք խոր վարած և լավ փոցխած հողամասի վրա ապա գործարանային, կամ տեղական պատրաստված կուլտիվատորներով ծածկել այն հաշվով, որ սերմն ընկնի 4—6 սանտիմ. խորությամբ։ Նայած հողային պայմաններին։

56. Աշնանացանը կատարել համեմատաբար խորը վոչ ավելի 7 սմ. խորությունից։ Ցանքսը կատարել բացառապես շարքացանով, նախորոք հողը լավ վարած և փոցխած հարթված հողամասի վրա։

57. Հայահատիկային կուլտուրաների գարնանացանքն ավարտել մասսայական ցանքի հողի քեշի մոմենտին 40 բան. որում։

58. Ըստ զոնաների սահմանել մեկ հեկտարի վրա ցանվելիք սերմերի հետևյալ նորմաները.

	1 ԶՈՆԱ.		2 ԶՈՆԱ.		ԿԱՏԱՐՎԵԼՈՒ ՅԵ	
	դոցիամիտոշ	դոցիամիտոշ	դոցիամիտոշ	դոցիամիտոշ	դոցիամիտոշ	դոցիամիտոշ
Աշնան ցորեն . .	1,60	—	1,70	—		
Գարնան ցորեն . .	1,4	1,5	1,5	1,6		
» գարի . .						
» վարսակ .	1,75	2	2,1	2,3		
» հաճար . .						

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ։— Յուրաքանչյուր հողամասի նկատմամբ ունենալ ուրույն մոտեցում ցանքսի խորության նորման հարմարացնելով տեղի հողային պայմաններին։

59. Պարտավորեցնել պահեստապետներին, բրիգադիրներին ու հաշվապահներին՝ խիստ հաշվառման յենթարկել ըստ բրիգադների և հողային սառնաների ու հողակտորների յուրաքանչյուր որվա բաց թողնված

սերմի քանակը և փաստացի ցանքը, նշանակելով տրվյալ հողակտորում ցանված սերմացուի քանակը։

60. Ըստ զոնաների, գարնանացան հացահատիկների ցանքի ավարտման ժամկետն որենսդիր կարգով սահմանել՝

Զոնայի №-ը	Վարելահողի տարածութ. հեկտարով	Ցանքի տարածութ. հեկտ.	Գարնանացանի հացահատ. ավարտ. ժամկետը	
			Ամիս	Թիվ
1. I Զոնա	6081	5196	Մայիս	2
2. II Զոնա	7866	6499	Մայիս	8

61. Ըստ զոնաների աշնանացանի հացահատիկների ցանքը որենսդիր կարգով սահմանված հետևյալ ձևով։

Զոնաների №-ը	Վարելահողերի տարածութ. հեկտարներով	Ցանքի տարածութ. հեկտ.	Աշնանացանքի սկիզբը	
			Ամիս	Թիվ
1. I-ին Զոնա	400	—	Ոգոստոս	15-ին
2. II. Զոնա	545	—	»—»	10-ին

11. ՅԱՆՔԻ ԽՆԱՄՔԸ

62. Վաղ գարնանը կատարել աշնանացանի փոցխում թեթև զիգզակ փոցխերով։ Փոցխումն ավարտել մինչև բույսի 8-10 սմ. բարձրության հասնելը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Թեթև ավազային նոսր հողերում աշնանացանի փոցխում չկատարել։

63. Աշնանացանի առաջին քաղհանը սկսել նրա փոցխման ժամանակ, իսկ երկրորդ քաղհանը կատարել 1-ին քաղհանից 10-15 որ հետո։ Սակայն այն հաշվով, որ ավարտվի մինչև խոզովակալումը։

64. Գարնանացան հացահատիկների 1-ին քաղհանը կատարել թփակալման շրջանում, իսկ 2-րդ քաղհանը կատարել նախքան խոզովակալումը, վոչ ուշ 1-ին քաղհանից 15-20 որ հետո։

65. Հացահատիկների քաղհանը կատարել ձեռքով, իսկ խոր արմատներով զարգացած մոլախոտերի դեպքում գործածել հատուկ պատրաստած սուր դանակներ։

66. Աշնանը վոչ ցանված և լավ թփակալված աշնանացանի վրա կատարել աշնանային մեկ քաղհան։

67. Խստիվ արգելել ամեն տեսակ ցանքերի մեջ անասունների մուտքը, վորի հսկողությունը դնել դյուղխորհրդի և կոլխոզնախագահի վրա։

68. Ըստ հնարավորության վոռոգելի տարածության տակ ընդգրկել նոր հողեր։

69. Բոլոր քաղհանված մոլախոտերը հեռացնել դաշտերի միջից, այրել կամ օգտագործել իբրև անասնակեր։

70. Հնձել միջնակներում, ճանապարհների յեզրերի և թմբերի վրա յեղած մոլախոտերը մինչև նրանց ծաղկակալումը։

71. Բոլոր ցանքսերի վրա սահմանել մշտական հսկողություն, վնասատուներ, կամ հիվանդություններ հայտնաբերելու դեպքում ձեռնարկել շտապ միջոցներ։ Այս նպատակի համար նշանակել հատուկ սիկնալիզատորներ։

72. Մինչև ցանքերի խողովակալումը, դաշտերը մաքրել խոտերից և այդպիսին հեռացնել դաշտերի յեզրերից։

12. ՀԱՅԱԲՈՒՅՍԵՐԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

73. Բերքահավաքի բոլոր տեսակի մեքենաները (հնձող, կալսիչ, կոմբայն և այլն) ու գյուղատնտեսական գործիքները նորոգումն ու լրացումն ավարտել մինչև հուլիսի մեկը։

74. Բերքահավաքի բարդ մեքենաները՝ հնձող, կալսող, կոմբայն ապահովել հատիկակալներով և աշխատանքի ընթացքում պարբերաբար ստուգել և դատարկել հատիկակալները։

75. Կոլտնտեսության ամբողջ ցանքսերի նկատմամբ ապահովել դաշտային պահակների հսկողությունը, մասնավորապես բերքահավաքի ամբողջ ընթացքում։

76. Բերքահավաքից մեկ ամիս առաջ ավարտել բոլոր միջգյուղյան և դաշտամիջյան ճանապարհների և կամուրջների վերանորոգումն ու կարգավորումը։

77. Բերքահավաքն սկսել ըստ առանձին հողամասերի հասունացման, առանց սպասելու ամբողջ դաշտի հասունացմանը։

78. Հայցահատիկների հնձի համար վերջնական ժամկետ սահմանել 12—15 աշխատանքային օր, ըստ կուլտուրաների սահմանել հետևյալ ժամկետները։

ա) Ուկրաինկայի բերքահավաքը կատարել նրա մոմային հասունացման շրջանում և ավարտել 3—4 օրում։

բ) Գարնանացան ցորենի բերքահավաքը կատարել նրա մոմային հասունացման վերջին և լրիվ հասունացման սկզբնական շրջանում և ավարտել 7—9 օրում։

գ) Գարու բերքահավաքն սկսել լրիվ հասունացման սկզբին և ավարտել առնվազն 8 օրում։

դ/ Սերմացաշտերի հունձը կատարել լրիվ հասունացման շրջանում։

79. Ամբողջ հնձված հացահատիկը խուրձ կապել

և գլեզել, կամ անհրաժեշտության դեպքում բարդոց դընել։

80. Բարդոց դնելիս դեկավարվել հետևյալ կանոններով.

ա) Երձերը դասավորել հասկերով դեպի ներս.

բ) Բարդոցներում դաշտում դասավորել մի գծի ուղղությամբ, այն հաշվով, որ հնարավոր լինի բարդոցների շարքերի մեջ բերքահավաքին զուգընթաց կատարել խոզանավար։

գ) Բարդոց դնելուց հետո, անմիջապես ամբողջ դաշտում թափված հասկերը հավաքել ձիու և ձեռքի փոցխերով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ձեռքով։

դ) Սայլում դասավորելիս յուրաքանչյուր բարդոցի տեղը փոցխել, կամ ձեռքով հավաքել բոլոր թափված հասկերը։

81) Դաշտում բարդոց կամ խուրձ յեղած ժամանակաշրջանում արգելել անասունների արածումը, կամ ավյալ դաշտում աշխատանքը վերջացնելուց հետո ավելորդ անձանց ներկայությունը։

82. Սահմանել յերկու օրենք—դաշտավարական բրիգադայի բրիգադավարները պարտավոր են հատուկ արձանագրությամբ ընդունել դաշտում կատարված բերքահավաքը, գնահատելով կատարված աշխատանքի վորակը. դաշտի բերքահավաքը միայն ավարտված համարել այն ժամանակ, յերբ դաշտը բրիգադավարից ընդունել և կոլտնտեսությունը։

83. Պարտադիր կարգով, կալում, գեղերի մոտ ջրով լիքը տակառներ և ջրամբարներ ունենալ, գեղերի շուրջը և նրանց մոտ ունենալ ավազակուտեր, կողմնակի մարդկանց կալում և գեղերի մոտ մուտքն արգելվում է, ինչպես և վոչ մի պայմանով թույլ չտալ ծխել, ունենալ մշտական պահակներ, դանդեր, սուլիչ և այլ հեր շեջ գործիքներ։

84. Կալսումն սկսել հնձի աշխատանքներին զուգընթաց, վոչ ուշ քան հնձի սկզբից 3 որ հետո, կալսումը կատարել ըստ առանձին բրիգադաների։

85. Բերքահավաքի համար անհրաժեշտ դյուղատնտեսական ամբողջ ինվենտարը, նախքան բերքահավաքի սկսելն ախտահանել, թույլ չտալ հացահատիկի կալսելը հին կալերում, առանց նախապես այրելու և ախտահանելու։

86. Կալսիչների աշխատանքները հարմարացնել քամհար սերմազտիչների և տրիյերների աշխատանքին այն հաշվով, որ առաջին հերթին ապահովվի ընթացիկ տարվա աշնանացան սերմացուի անխափան, կանոնավոր անհապաղ սերմազտումը, և ապա դալիք գարնանացանի սերմացուի լրիվ զտումը։

87. Կամերով կալսած թեղն արգելել մեկ որից ավել առանց քամհարելու թողնել կալում։

88. Կալից դուրս յեկած և վոչ մի հատ հացահատիկ առանց կշռելու և համապատասխան նարյադ կազմելու պահեստում ամբարելը խստիվ արգելել։

89. Հացահատիկն ամբարել նորմալ խոնավություն ունենալու դեպքում, միայն 12—13 %-ից ավելի խոնավ լինելու դեպքում, հացահատիկը չորացնել լրիվ ապա նոր ամբարել։

1. ԿՏԱՎՀԱՏԻ ՀԱՄԱՐ ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ.

1. Կտավհատին ըստ հնարավորին հատկացնել լավ ստուկտուրա ունեցող պարարտ, կամ խամ հողամասեր։

2. Նույն հողամասում կտավհատի ցանքը կրկնել վոչ շուտ քան 5—6 տարի հետո։

3. Հողի վարը կատարել աշնանից առնվազն 20 ս. մ. խ., այդ վիճակում առանց փոցխելու թողնել մինչև վաղ գարուն, այնուհետև կատարել կրկնավար առնվազն 14 ս. մ. խորությամբ ու անմիջապես փոցխել։

4. Այն հողամասերը, վորոնք վարակված են կուսկուտայով (դոդա) վոչ մի դեպքում չթույլատրել կտավհատի ցանքսի տակ դնել։

2. ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ

?. Կտավհատին հատկացվող հողամասը պատրաստել դոմաղբով, կամ մոխրով, հեկտարին տալով 20—25 տոննա։

6. Պարարտությունը մտցնել աշնանը հիմնական վարից առաջ, ըստ վորում փռել հավասարաչափ և անմիջապես վարել։

3. ՍԵՐՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ.

7. Առանց սերմացուի համապատասխան վորակը հաստատող լաբարատորիայի վկայականի արգելել կտավհատի ցանքը։

8. Սերմացուն մաքրել և կոնդիցիային հասցնել հատուկ սերմազտիչներով (կտավհատի տրիերների, ձեռքի մաղերի միջոցով, վոր սերմացուի մեջ բացի տիպակ կտավհատից գանգրավուշ ուրիշ և վոչ մի այլ բույս) սևուկ, սորակ, հլածակ և այլն խառնուրդ չլինի։

9. Գարնան ցանքսից առաջ լավ մշակված ցրտահերկերից առանձնացնել տվյալ կոլտնտեսության կտավհատի ցանքսի համար սերմադաշտ, յելնելով տվյալ կոլխոզի ցանքի նորմայից և բերքատվությունից։

10. Կտավհատի սերմադաշտը քաղհանել այնքան անգամ մինչև վոր, բացի տիպակ կտավհատից ուրիշ վոչ մի բույս չլինի։

11. Ֆուզարիզով վարակված ցանքից ստացված սերմերն անպատճառ ախտահանել համաձայն հատուկ հրահանգի։

4. ՅԱՆՔ

12. Յանքը կատարել վաղ գարնանացաններին զուգահեռ, ավարտելով միանման զոնայում վոչ ուշ քան 5—7 որում:

13. Սերմացուի նորման մեկ հեկտարին սահմանել շարքացանի դեպքում 45—50 կ. շաղացանի դեպքում՝ 55—60 կիլո գրամմ: Սերմերի խորությունը պահպանել 3—4 ս. մ. խ.:

5. ԽՆԱՄՔ

14. Մինչև ծաղկակալումն առնվազն յերկու անգամ քաղհանել, մինչև վոր բացի գանգրավուշից դաշտում և վոչ մի բույս չլինի:

15. Կուսկուտայով վարակված քաղհանված մոլախոտը այրել:

6. ԲԵՐՔԱՀԱՎԱՔ.

16. Բերքահավաքը կատարել միմիայն լրիվ հասունացման շրջանում, յերբ գանգրավուշի սերմապարկերը գորշ գույն են ստանում, իսկ սերմը նորմալ շականագույն է լինում:

17. Բերքը հավաքելիս, խորձիկներ կապել և անմիջապես դաշտից փոխադրել կալը:

18. Կտավհատի կալսումը կատարել բերքահավաքին զուգընթաց, լրիվ չորացման ժամանակ, իսկ սերմադաշտից ստացված կտավհատը, առանձին կալսել և ամբարել, զտելուց և 100 տոկոսի մաքրությանը հասցնելուց հետո:

19. Մինչև սերմացուն լցնելը, պահեստը ախտահանել թաց, կամ գազային մեթոդով, համաձայն այդ առթիվ տված հատուկ հրահանգի:

7. ԿԱՐՏՈՖԻԼԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՍԻՐԸ

20. Կարտոֆիլի հատկացվող հողամասի հիմնական վարը կատարել աշնանը 25 ս. մ. խ. առանց փոցխելու, թողնել մինչև գարուն:

21. Հողամասն աշնանից-ցրտավարի տակ պարարտացնել գոմաղբով, ոգտագործելով հեկտարին 40—50 տոննն: Աշնանից չպարարտացրած հողամասերը պարարտացնել գարնան կրկնավարի տակ: Մոխրաղբային պարարտանյութը տալ գարնանը հեկտարին 12—15 տոննա:

22. Բոլոր կոլտնտեսություններում սերմադաշտերի համար առանձնացնել կարտոֆիլի ցանքից լավագույն-պարարտ հողամասեր, յելնելով տվյալ կոլտնտեսության ցանքի նորմայից և բերքատվությունից:

23. Իբրև կանոն արգելել կարտոֆիլի տեղը հաջորդ տարի նորից կարտոֆիլ ցանելը:

24. Ցրտավաճ հողամասում գարնան դաշտ դուրս գալու առաջին իսկ հնարավորության դեպքում կատարել 2-րդ խոր-հերկ, անմիջապես մեկ յերկու յերկաթ զիկ զաղով փոցխել:

8. ՍԵՐՄԱՑՈՒՅԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ՅԱՆՔԸ

25. Ցանքի նախորյակին կազմակերպել սերմացու կարտոֆիլի ընտրությունը, ըստ դույնի, ցանքի համար

ոգտագործել 80 գրամ և ավելի կշիռ ունեցող պալարներ:

26· Կարտոֆիլի տարբեր գույնի պալարների ցանքը կատարել առանձին հողակտորներում:

27· Սերմացույի նորման սահմանել մեկ հեկտարին 20 ցենտներ, իբրև կանոն մեկ բնում տնկել մեկ պալար:

28· Արդելել կիսած ու կտրված պալարներով ցանքը:

29· Ցանքը կատարել մոտկորներով, գութանի տակ:

30· Առաջադրվում է շարքը-շարքից 60—65 ս. մ. հեռ., իսկ թուփը-թփից 40—45 ս. մ. հեռավոր ու թյամբ:

31· Պալարի տնկելու խորությունը ընդունել թեթև հողերում 10—12 ս. մ., իսկ ծանր-հողերում 8-10 ս. մ.:

32· Ցանքը կատարել տվյալ գյուղի կոլտնտեսության հացահատիկային կուլտուրայի ցանքի հետ միատեղ, դաշտերի զննայցման սկզբունքի համաձայն 5—6 բանվորական որում:

9· ԽՆԱՄՔԸ-ՄՇԱԿՈՒՄԸ.

33· Կարտոֆիլի ծիլերն յերեվալուն նախորյակին ամբողջ ցանքը մեկ յերկու յերես զիզզագով փոցխել:

34· 1-ին. քաղհանը-փխրացումը կատարել շարքերը նշմարվելուն պես, 1—3 յորում: Քաղհանը + փխրեցումը կատարել այնքան անգամ, վորքան անհրաժեշտ

և (մինչև բերքահավաքը) ցանքը մոլոխոտերից զերծ փխրուն վիճակում պահելու համար:

35· 2-րդ քաղհանը և փխրացումը կատարել մինչև 1-ին բուգլիցը, կուլտիվատորներով կամ ձեռքի չափայով: Հետագա փխրեցման և քաղհանի աշխատանքները կատարել ըստ պահանջի:

36· Բուգ լցնելու աշխատանքները կատարել 3-4 բանորում:

1-ին բուգ լիցը կատարել յերբ թուփն ունի 15-18 ս.մ. բարձրություն:

2-րդ բուգլիցը կատարել 1-ից 8-10 որ անց: 3-դը ավարտել մինչ թփի ծաղկելը:

37· Զրովի կարտոֆիլի ցանքերի ջուրը տալ՝ 1-ին ջուրը բուգլցնելու նախորյակին 2-րդ և 3-րդ թփի ծաղկման շրջանում: Վերջին ջուր տալը ավարտել բերքահավաքից վոչ ուշ 30 որ առաջ:

38· Յուրաքանչյուր ջրից, ինչպես և անձրեվներից անմիջապես հետո միջշարքային տարածությունները փխրեցնել:

10· ՊԱՅՔԱՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

39· Կարտոֆիլի ամբողջ ցանքը, հունիս ամսվա ընթացքում ֆիտոֆտորա հիվանդության դեմ, իբրև նախազգուշական միջոց սրսկել բորտոյան հեղուկով, խոնավ և անձրեվային պայմաններում կատարել 2-րդ սրսկում:

40· Ցանքում նկատվող այլ հիվանդություններով վարակված թփերը, ինչպես թփի գանգրահերությունը, տերևների կուչ գալը, բազմացողունությունը և այլն արմատախիլ անել և այրել:

41· Բերքահավաքի ժամանակ ինչպես և ցանքի նախորյակին սերմացվի ընտրության ժամանակ ջոկել, հեռացնել հիվանդ, վարակված բոլոր տեսակի պտները:

11· ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ ՅԵՎ ԱՄԲԱՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

42· Բերքահավաքը կատարել պալարի լրիվ հասունացման ժամանակ 5—6 որում արեվոտ և չոր յեղանակներին:

43· Բերքահավաքից հետո կատարել փոցխում հավաքելով դաշտում մնացած կարտոֆիլը:

44· Սերմացու կարտոֆիլի փոխադրումը կատարել պարկերով և բերքը անվտանգ փոխադրելու համար հարմարեցնել փոխադրական միջոցները:

45· Սերմացու կարտոֆիլը ամբարել ըստ սորտերի, բուրգերում և պահեստներում:

46· Բերքահավաքից 30 որ առաջ ավարտել կարտոֆիլի ամբարների, տարաների, փոխադրական միջոցների ստուգման, վերանորոգման և պահեստների սխտահանման աշխատանքները— այդ առթիվ յեղած հատուկ հրահանգի համաձայն: Արգելել կարտոֆիլի բերքը փոխադրելու ժամանակ սրածայր մետաղյա վերջավորությամբ գործիքների գործադրումը: Ստուգել և կարգավորել, ինչպես և պակասը ձեռք բերել—պահանջի քանակությամբ ողանցքներ (ողափոս խողովակներ) ջերմաչափեր, թիյեր և այլ հարմարանք:

12· ԿԱՐՏՈՖԻԼԻ ՍԵՐՄԱՑՈՒՑԻ ՁՄՐԱՆ ԽՆԱՄՔԸ

47· Բուրգերում, պահեստներում արգելել սերմացու կարտոֆիլի շերտերի բարձրությունը 1, 1,25 մետրից ավելի լցնելը:

48· Ձմրան պահպանման ժամանակաշրջանում կատարել առնվազն 3—4 անգամ սերմացուի ստուգում, փչացման վտանգ նկատելիս անմիջապես միջոցների դիմել, միաժամանակ իրագեկ դարձնել շրջանային ագրոպերսոնալին:

50· Ջերմաստիճանի տատանումների հաշվառման համար ագրոնոմի ոժանդակությամբ կազմել դիտողությունների տետր և պարբերաբար գրանցել պահանջվող տեղեկությունները: Պահպանման համար առանձնացնել պատասխանատու անձնավորություն:

ԿԱՐՆԴԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

1· Կորնդանը հողի նկատմամբ պահանջկոտ չի, լավ աճում է չորային հողերում, չի կաբելի միայն ճահճացած, թթու—մշտապես խոնավ հողերում:

1· ՑԱՆՔ

2· Կորնդանը ցրտացան կատարելիս ցանել ցանված հացահատիկի շարքերին ուղղահայաց:

30· Սերմացուի նորման ընդունել մեկ հեկտարին՝ շարքացանի դեպքում 80 կիլո, իսկ շաղացանի դեպքում 1, 1,1 ցենտներ:

4· Կորնդանի ցանքը պետք է կատարել Ֆլաբորա—

տորֆայի կողմից կոնդիցիոն ճանաչված սերմերով։ Ցանքի խորությունը սահմանել 2–4 ս. մ.։

5. Մինչև ցանքի կատարելը կորնդանի սերմերը .....նիտրոգինով։

2. ԲԵՐՔԱՀԱՎԱՔ

6. Ոոտի համար հնձվող կորնդանը պետք է հընձել մինչև 30 տոկոսի ծաղկելը, չորացնելուց հետո փոխադրել և դեզ դնել։

7. Սերմ ստանալու համար ցանված կորնդանը պետք է հնձել, յերբ հունդերը մուգ կանաչ գույնից անցել են բաց կանաչ գույնի, ներքեվի հունդերից 2–3-ը գորշացել հասունացել են, հետո կազմել փոքր խրձիկներ և չորացնել։ Կորնդանը տեղափոխելիս սայլերի մեջ բրեզենդ, կամ խսիրներ փռել։ Կալսումը կատարել խնամքով։

8. Ոիստիվ արգելել ամբողջ տարվա ընթացքում կորնդանի ցանքերի վրա անասունների արածացնելը։ Ստացված սերմերը չորացնել և պահեստել նախորոք ախտահանված չոր և մաքուր պահեստներում։

3. ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՎԻԿԱՑԻ ՄՇԱԿՈՒՄԸ

9. Վիկա չի կարելի ցանել ստորեր՝ բլ՝ որ՝ բին մոտիկ, ավազային չկավային հողամասերում. ինչպես նաև հարավում գտնվող հողամասերի չոր լանջերի վրա։

10. Ցանքը պետք է կատարել միայն կոնդիցիոն սերմերով— հեկտարին մեկ ցենտներ. վիկի համար

հատկացված հողամասերը աշնանը պետք է հերկել 18—20 ս. մ. խորությամբ. գարնանացանից առաջ հերկված հողամասը կրկնավարել և խնամքով փոցխել։

11. Վիկը պատկանում է այն բույսերի շարքերին, վորոնք պահանջկոտ են խոնավության տեսակետից, վորուստի պետք է ցանքը կատարել վաղ գարնանը, վարսակի կամ գարու հետ խառը մեկ ցենտներ վիկի հետ խառնել գարի կամ վարսակ 60 կիլո, վորպեսզի վիկը չպարկի։ Ցանքը կատարելուց առաջ սերմերը նեհրաբենացնել։

12. Կերի համար վիկը պետք է հնձել ծաղկման շրջանում, իսկ սերմի համար պետք է հնձել, յերբ պատիճները 50 տոկոսով հասունացել են։ Հնձված վիկը պետք է լավ չորացնել, հետո զգուշությամբ պետք է տեղափոխել և դիզել։

13. Սերմացուները պետք է հավաքել առավոտվա ցողին, յերբ բույսը չորացած չի լինում, կալսում կատարելուց հետո մի անգամ յեվս սերմը լավ չորացնել և ապա նոր պահեստել։

4. ՍԻԼՈՍԱՅԻՆ ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

14. Արևածաղկին հատկացված հողամասը պետք է վարել աշնանացանից 20—20 ս. մ. խորությամբ, իսկ վաղ գարնանը լուշչիլնիկներով փխրացնել և լավ փոցխել։

15. Պարարտացումը տալ աշնանը, իսկ գարնանը տալու դեպքում հողը փոցխել, ապա 30—40 տոննա գոմաղբ ցրել և կրկնավարել 10—12 ս. մ. խորու-

թյամբ խաչաձև յերկու անգամ փոցխել և ցանել շարքացանով։

16. Արևածաղիկը պետք է ցանել լայն շարքերով 50—60 ս. մ. միջ շարքային տարածությամբ, 3—5 ս. մ. խորությամբ. սերմացույի նորմա ընդունել մեկ հեկտարին 30—40 կիլոգրամ։

5. ՑԱՆՔԻՍ ԽՆԱՄՔԸ

17. Հողը կեղեվակալելուց անմիջապես հետո պետք է փխրացնել՝ միջ շարքային տարածությունները։ Առաջին քաղհանը և նախնական նոսրացումը պետք է կատարել 2—4 զույգ, իսկական տերեվները յերեվալու ժամանակ։

Յերկրորդ քաղհանը և վերջնական նոսրացումը կատարել առաջին քաղհանից 15—20 որ հետո, վերջնական նոսրացումից հետո բույսերը, ակոսի յերկարությամբ թողնել իրարից 15—20 ս. մ. հեռավորության վրա։

6. ԲԵՐՔԱՀԱՎԱՔ

18. Սիլոսի համար արեվածաղիկը պետք է հնձել ծաղկման շրջանում։

7. ԿԵՐԻ ՃԱԿՆԴԵՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

19. Կերի ճակնդեղի համար հատկացված հողամասի վարը կատարել աշնանից 20—22 ս. մ. խոր. և առանց փոցխելու թողնել մինչև գարուն։ Գարնանը դաշտ դուրս գալու պես, կատարել կրկնավար 10—12

ս. մ. խորությամբ և ապա խաչադիր ձեվով փոցխել յերկու անգամ։

20. Պարարտացումը կատարել աշնանը խոր հերկի տակ, մեկ հեկտարին տալով 30—40 տոննա գոմաղբ կամ 10—15 տոննա խառնաղբ։

21. Ցանքը կատարել հացահատիկների ցանքսին զուգընթաց։ Սերմացույի նորման, կոնդիցիոն վիճակում մեկ հեկտարին ցանել 16—18 կիլոգրամ։

12. Ծանը, կավային հողերում ծիլերը յերեվալուն պես կատարել միջշարքային տարածությունների փլխրեցումը և կատարել շարքերի համատարած քաղհան, իսկական տերեվների առաջին զույգը կազմելուց հետո կատարել բույսերի նոսրացում, թողնելով մեկական բույս 18—20 ս. մ։ հեռ. վրա։ Նոսրացումից հետո կատարել ստուգում և (պաչինկա) բաց տարածությունները ցանել թրջված սերմերով։

Յերկրորդ զույգ տերեվները յերեվալուն պես կատարել յերկրորդ փխրեցումը և մ. ախոտերի քաղհան։ Ճակնդեղի մշակման բոլոր աշխատանքները շարունակել այնքան անգամ, մինչև շարքերում յեղած բույսերի տերեվները իրար միանան։

23. Կերի ճակնդեղի բերքահավաքը պետք է սկսել, յերբ տերեվներն սկսում են չորանալ և շարքերն սկսում են բացվել։ Ճակնդեղի բերքահավաքը պետք է կատարել չոր յեղանակներին, մինչև ցրտերի ընկնելը։

8. ԲՆԱԿԱՆ ԽՈՏԱՀԱՐՔՆԵՐ

24. Վաղ գարնանից կատարել քարերի հավաքը, վերացնել կոշտերը, այն հաշվով, վորպեսզի խոտ-

հարքների ամբողջ տարածությունները հնարավոր լինի մաքուր հնձել: Կատարել հանդամիջյան, դյուղամիջյան, ճանապարհների և կամուրջների վերանորոգում, խիստ կորուստների դեմ պայքարելու նպատակով:

25. Կատեգորիկ կերպով արգելել խոտհարքներում անասուններ արածացնելը, վորը խիստ կերպով իջեցնում է խոտհարքի բերքատվությունը և խոտի վորակը:

26. Խոտհունձը կատարել այն ժամանակ, յերբ բույսի մեջ ամենամեծ քանակությամբ սննդանյութեր են կուտակված, վորը բնորոշում է խոտի կերային բարձր արժեքը: Խոտհունձը ժամանակին չկատարելու դեպքում խոտաբույսերը կոպտանում, փայտանում և իջեցնում են խոտի կերային արժեքը:

27. Խոտի չորացումը կազմակերպել այնպես, վորպեսզի խոտը հիմնովին ստացված լինի, խոնավությունը հասցնել 16 տոկոսի:

28. Կորուստներից խուսափելու համար..... խոտը քիչ չրջել, վորպեսզի (ամենաանդարար մասերը) նուրբ տերևները և ծաղիկները, չջարդվեն, չրթափվեն: Խոտհնձին զուգընթաց պետք է կազմակերպել փոխադրումը և դիզելը:

29. Դեզ դնել լավ չորացած խոտը, դիզել հարթ և չոր տեղում:

Հրդեհներից խուսափելու համար պետք է դեզերը մեկը-մյուսից 100—150 մտ. հեռավորության վրա դնել և չարած առվակներ փորել ու մոտիկ ջուր ունենալ:

30. Պայքար կազմակերպել թունավոր բույսերի և

մոլոխոտերի վոչնչացման համար, հավաքել և այրել այն:

10. ԱՐՈՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

31. Արոտներում անասունների արածացնելն սկսել ձյան հալելուց և հողը չորանալուց հետո, հակառակ դեպքում կառաջանա կոշտեր:

32. Կիրառել արոտները հերթականությամբ ոգտագործելու ձևերը:

33. Քարի հավաքն սկսել արոտ դուրս գալու սկզբից, մինչև ուշ աշնանը (յերբ տնտեսությունն ունենում է ավելորդ բանվորական ուժ):

34. Ճահճային մոլոխոտերի դեմ պայքարել ճահիճները չորացնելու միջոցով, իսկ ճահճացած մեծ տարածությունները չորացնել դրինաժի միջոցով:

35. Արգելել արոտներն ու խոտհարքները վարել, այդ գործում հանցավորներին կանչել դատական պատասխանատվության:

36. Արոտների թունավոր խոտերը հավաքել և այրել:

11. ԴԱՎՄԱԹՑԱՆ ՑԵՐԻՑՈՒԿ

1. Դ.-Ցերիցուկի համար հատկացնել հյուսիս-արևելք նայող անջրդի, ջուր լավ թափանցող հողամասերը:

2. Դ.-Ցերիցուկի հողամասը ցանքսից առաջ մաքրել քարերից, վարը կատարել 25 ս. մ. խ., փոցխել 2—3 անգամ:

և ծլունակ սերմացու:

5. Դ.—Ցերիցուկը՝ 2—3 տերեվ ունենալու դեպքում կատարել առաջին քաղհանը:

4. Դ.—Ցերիցուկի ցանքը կատարել ուշ աշնանը, սեպտեմբեր—հոկտեմբեր ամիսներին:

Ծանոթություն.—Նկատի ունենալով, որ առաջին քաղհանն ունի վճռական նշանակություն, այդ աշխատանքը կատարել ճիշտ և ժամանակին:

6. 2-րդ քաղհանը կատարել, յերբ բույսը 8—10 ս. մ. բարձրություն ունի, կամ 4—5 տերեվներ է առաջացել:

Կատարել բույսի նոսրացում, թողնելով (բույսը-բույսից 30 ս. մ. հեռավորության վրա:

7. 3-րդ քաղհանը կատարել 2-րդ քաղհանից 20 որ հետո: Անհրաժեշտության դեպքում կատարել 4—5 անգամ քաղհան: Բոլոր քաղհաններից հետո փխրացումը կատարել կուլտիվատորներով:

8. Բոլոր քաղհանված մոլախոտերը գուրս թափել և այլն:

9. Դ.—Ցերիցուկի բուգլիցը կատարել աշնանը, սեպտեմբեր ամսին:

10. Դ.— Ցերիցուկի բերքահավաքը կատարել, յերբ բույսերը մասսայաբար ծաղկել են, ծաղիկները հավաքել ձեռքով, հավաքած ծաղիկները չորացնել, նախորոք 2—3 ժամ արևի տակ պահելով, վորից հետո:

3. Դ.— Ցերիցուկի ցանքը կատարել ուղիղ շարքերով, շարքը շարքից 70 ս. մ. հեռավորության վրա, տեղ փոխադրել հատուկ չորանոցներ:

11. Դ.—Ցերիցուկի ծաղիկները փռել կտավի, ճլոպի, կամ այլ փռվածքի վրա շերտի հաստությունը 3 ս. մետր. փռված ծաղիկները հաճախ խառնել ձեռքի փոցխով մինչև լրիվ չորանալը:

12. Դ.—Ցերիցուկի չորացած ծաղիկները պահպանել չոր պահեստներում:

Սույն ագրոկանոնների հոլովությունը դնել ՀՈՂԲԱԺՆԻ, ՄՏԿ-ի և նրանց ագրոպերսոնալի և գյուղական խորհուրդների վրա:

Այս ագրոկանոնները տարածվում են բոլոր կոլտնտեսությունների և մենատնտեսների վրա: Ագրոկանոնները խախտողները կյենթարկվեն դրամական տուգանքի 50 ռուբլու սահմաններում, կամ հարկադիր աշխատանքի 15 որ ժամանակով, իսկ չարամտորեն խախտողները կյենթարկվեն դատական պատասխանատվության:

Կենտգործկոմի Ղուկասյանի շրջանային կազմկոմիտեյի նախագահ՝ Պ. ՅԵՍԱՅԱՆ

Կենտգործկոմի Ղուկասյանի շրջանային կազմկոմիտեյի քարտուղար՝ Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

04

«Ազգային գրադարան»
NL0203783

282
29.954